

ԳՈՐԾԱՌՈՒՅԹՆԵՐԸ

Համաձայն Հայաստանի Հանրապետության Կառավարության 18.07. 2002թ. թիվ 1046- ն որոշման կազմակերպության գործունեության առարկան և նպատակը արգելոցի ու արգելավայրերի տարածքների բնական Էկոհամակարգերի լանդշաֆտային և կենսաբանական բազմազանության բնության ժառանգության գիտական ուսումնասիրության պահպանության պաշտպանության վերականգնման վերարտադրության հաշվառման դիտանցի բնական պաշարների կայուն օգտագործման ապահովումն է :

Այդ նպատակով կազմակերպությունը՝

- ապահովում է արգելոցի և արգելավայրերի տարածքների բնական Էկոհամակարգերի լանդշաֆտային ու կենսաբանական բազմազանության գենոֆոնդի բնության ժառանգության պահպանությունը կազմակերպում և իրականացնում է դրանց գիտական ուսումնասիրությունը.
- նշված տարածքներում կազմակերպում և իրականացնում է Էկոհամակարգերի ու դրանց առանձին բաղադրիչների բուսական և կենդանական աշխարհի հաշվառումն ու նախապատրաստում կադաստրի վարման համար անհրաժեշտ նյութերը.
- իրականացնում է Էկոլոգիական դիտանց վարում բնության տարեգրությունը.
- կանխարգելում է մարդու գործունեության հետևանքով արգելոցի և արգելավայրերի բնական Էկոհամակարգի հավասարակշռությունը խախտող գործընթացները և Հայաստանի Հանրապետության օրենսդրությամբ սահմանված դեպքերում՝ իրականացնում խախտված Էկոհամակարգերի վերականգնման միջոցառումներ.
- կազմակերպում է բնակչության մասսայական հանգիստը ամենօրյա և զբոսաշրջությունն այդ թվում՝ Էկոզբոսաշրջություն.
- սահմանված կարգով իրականացնում է հրդեհային անվտանգության միջոցառումներ.
- ապահովում է ֆիզիկական և իրավաբանական անձանց կողմից արգելոցի ու արգելավայրերի կանոնադրություններով սահմանված դրույթների կատարումը.
- իր իրավասության սահմաններում իրականացնում է բնակչության Էկոլոգիական կրթության ու դաստիարակության միջոցառումներ.
- ծրագրում և կազմակերպում է գիտահետազոտական աշխատանքներ.
- անդամակցում է միջազգային բնապահպանական կազմակերպություններին մասնակցում միջազգային բնապահպանական ծրագրերին.
- պատրաստում ու հրատարակում է գիտական և գիտաճանաչողական գրականություն ու տեղեկատվական նյութեր.

- իրականացնում է Հայաստանի Հանրապետության օրենսդրությամբ և սույն կանոնադրությամբ նախատեսված այլ գործառնություններ:

Կազմակերպությունն իրականացնում է ձեռնարկատիրական գործունեության հետևյալ տեսակները`

- Հայաստանի Հանրապետության օրենսդրությամբ սահմանված կարգով կենսառեսուրսների այդ թվում` բույսերի և կենդանիների տեսակների անտառային ռեսուրսների վերարտադրություն օգտագործում և իրացում.
- արժեքավոր և գեղագարդային տնկանյութի ու բուսատեսակների աճեցում և իրացում.
- գյուղատնտեսական մթերքի արտադրություն վերամշակում և իրացում.
- բնափայտի մթերում վերամշակում և իրացում.
- բնակչության հանգստի և զբոսաշրջության այդ թվում` էկոզբոսաշրջության կազմակերպում.
- հանգստի և զբոսաշրջության հետ կապված սպասարկման ծառայությունների մատուցում.
- կողմնակի անտառօգտագործում խոտհունձ անասունների արածեցում փեթակների և մեղվանոցների տեղադրում վայրի պտղի ընկույզի սնկի հատապտղի դեղաբույսերի ու տեխնիկական հումքի հավաքում և դրա արդյունքում մթերված կենսապաշարների վերամշակում ու իրացում.
- արգելոցին և արգելավայրերին վերաբերող գովազդի կազմակերպում.
- գիտական և գիտաճանաչողական գրականության ու տեղեկատվական նյութերի պատրաստում և հրատարակում.
- տեղեկատվության տրամադրում և խորհրդատվություն:

Կազմակերպությունը լիցենզավորման ենթակա գործունեության տեսակներով կարող է զբաղվել միայն լիցենզիայի առկայության դեպքում: